



«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն

Երևան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, ֆաքս: (37410) 581102, E-mail:

info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

19.03.2018թ.

**ՀՀ Արմավիրի մարզպետ
Պարոն Աշոտ Ղահրամանյանին**

**«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի
«Հետք» թերթի լրագրող
Գրիշա Բալասանյանից
Հեռ. 093-82-26-80**

Հարգելի պարոն *Ղահրամանյան*,

«Հետք» էլեկտրոնային թերթը հոդված է պատրաստում: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6, 9 և 12-րդ հոդվածների հիմքով խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.

1. Արմավիրի մարզում քանի՞ աղբավայր է գործում: Նշել դրանց վարչական տարածքները և աղբավայրերից յուրաքանչյուրի մակերեսը, յուրաքանչյուր աղբավայրի տարածքից օգտվող համայնքների ցանկը:
2. Ո՞ր աղբավայրերն են ենթակա փակման: Նշել դրանց վարչական տարածքները և աղբավայրերից յուրաքանչյուրի մակերեսը:
3. Աղբավայրերից քանի՞սն են ցանկապատված և ի՞նչ միջոցառումներ են իրականացվում մյուսների ցանկապատման համար: Նշել ցանկապատված աղբավայրերի տվյալները:
4. Ո՞ր փուլում է գտնվում մարզի աղբի վերամշակման գործարանի կառուցման ծրագիրը: Ի՞նչ ծավալի աղբի մշակման և ի՞նչ տարածքի աղբավայրի վերաբերյալ է ծրագիրը: Որքա՞ն արժե ծրագիրը և որն է ֆինանսավորման աղբյուրը:

Կանխավ շնորհակալություն

Դիմող՝ Գրիշա Բալասանյան